

ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ՈՍԿԵԱՆ

Հսեցինք մեծաւ խնդութեամբ եւ գոհութեամբ սրտի, թէ
կ' Պօլսոյ մեծ Մաքսատան ընդհանուր գրաքննիչն՝ Մեծ . Գրի-
գոր էֆ . Սսկեան՝ իւր փափուկ եւ դժուարին պաշտօնին մէջ՝ հա-
ւատարմութեամբ եւ իմաստութեամբ մեծամեծ ծառայութիւններ
մատուցած լինելով մէկ կողմէն Օգոստոսփառ Սուլդան Ապտիւլ
Համիտ խանի բարեսէր տէրութեան, իսկ միւս կողմէն ալ բարի
վարուց եւ կրօնից՝ արգելելով 'ի դէպ ժամու եւ 'ի պահանջել հար-
կին այն հրատարակութիւններն, որոնք փաստաբեր կարեն լինել
ոչ միայն օրինաւոր իշխանութեանց, այլ մանաւանդ եղծիչ բարո-
յականին հասարակաց, իրաւամբ արժանացել է Սրբազան Քա-
հանայապետին Լէոն ԺԳի մեծ գոհունակութեան եւ, առ որ կը
տածէ միշտ ծայրագոյն մեծարանք մ'եւ անկեղծ սէր . Արդ, Մեծ .
Գրիգոր էֆ . վերը յիշուած եւ դեռ ուրիշ առանձնական եւ հասա-
րակատիրական բարեմասնութեանց եւ արժանեաց համար, զորս
Գերերջանիկ Հոգեւոր Տէրն մեր Ազարեան Պատրիարք եւ Կաթո-
ղիկոս տանն Կիլիկիոյ բարեհաճել էր հաղորդել Սրբազան Քահա-
նայապետին, Նորին Սրբութեան առանձին կոնդակաւ մի՝ (տուեալ
16 Մայիսի 1894,) իրաւամբ դասուած է Ս . Սեդրեասորոսի Կար-
գի Աւպետաց ազնիւ եւ բարձր կաճառին մէջ, եւ անոր շքանշան
խաչին եւ սրովը պատուուած, զոր մեր բարեսէր Տէրութիւնն եւ
այս բանս ճանչցած է եւ հրատարակած յօրագիրս . Տարակոյս չի-
կայ թէ այսպիսի եղելութիւն մի՝ մեծ խնդութիւն կը պատճառէ
բոլոր իւր ազգականաց եւ բարեկամներուն . իսկ մենք առթիւս
մեր ընդարձակուած սրտի ուրախութեան հետ՝ կը մաղթենք մեր
ազնուաշուք բարեկամ՝ Մեծ . Գրիգոր էֆէնտիին, որ իւր իմաս-
տուն եւ բարեբարոյ ընթացիւքն՝ եւ քան զեւ յառաջէ պատուոյ եւ
փառաւորութեան ճանապարհին վրայ, բերելով միանգամայն պա-
տիւ Օսմանեան բարձրաշուք պետութեան եւ մեր ազգին, որոնց
կրկնակի համակրանքն եւ վայելած է միշտ, եւ կը յուսանք թէ պի-
տի վայելէ անպակաս .